



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N 14403-20

0047 ՀՀ Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

☎ (374-10) 65-05-53, 65-46-95

10. 09 2020թ.

Էլ. փոստ՝ info@hlib.am

ՍԿԺ. 41-02
14.09.2020թ.


ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐ
ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ
ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, Վ. ՍԱՐԳՍՅԱՆ 26/3, 5-ՐԴ ՀԱՐԿ, 501 ՍԵՆՅԱԿ

Հարգելի տիկին Ասատրյան

Ի պատասխան ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին
հասցեագրված Ձեր 2020թ. սեպտեմբերի 2-ի թիվ 62-01 դիմումի հայտնում եմ, որ.

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին
մասի 5-րդ կետի համաձայն՝ աշխատանքային օրենսդրության հիմնական
սկզբունքներից է՝ աշխատողների իրավունքների և հնարավորությունների
հավասարությունը:

2. Օրենսգիրք 13-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային
հարաբերությունները աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա
հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ աշխատողն անձամբ, որոշակի
վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ (որոշակի
մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով
ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է
աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր
պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ և աշխատանքային
պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:



0047, 22, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129

Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am

www.hlib.am


Թեժ գիծ՝ 8107


3. Օրենսգիրք 7-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե դատական կարգով հաստատված է, որ գործատուի և աշխատողի միջև կնքված քաղաքացիաիրավական բնույթի պայմանագրով փաստացի կարգավորվում են աշխատանքային հարաբերություններ, ապա նման հարաբերությունների նկատմամբ կիրառվում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթները:

Վերը նշված իրավանորմերի պահանջներից հետևում է, որ գործատուն միևնույն աշխատանքային իրավունքները և պարտականությունները ունեցող աշխատողների հետ պետք է կնքի միայն աշխատանքային պայմանագիր:

Միաժամանակ հայտնում եմ, որ եթե գործատուն միևնույն աշխատանքային իրավունքները և պարտականությունները ունեցող անձանց հետ կնքել է (անկախ ներկայացված պատճառաբանություններից) աշխատանքային և ծառայությունների մատուցման (քաղաքացիաիրավական բնույթի) պայմանագրեր, ապա գործատուի և աշխատողի միջև կնքված ծառայությունների մատուցման (քաղաքացիաիրավական բնույթի) պայմանագրի փաստացի աշխատանքային հարաբերություն կարգավորելու փաստը կարող է հիմնավորվել միայն դատական կարգով և տվյալ դեպքում նման հարաբերությունների նկատմամբ կիրառվում են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի դրույթները:

Հարգանքով՝

 Recoverable Signature

X 

ԳՈՀԱՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Signed by: DARBINYAN GOHAR 5705820186

ԳՈՀԱՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Կատարող՝ Գարիկ Պողոսյան
Աշխատանքի վերահսկողության վարչություն
հեռ.0(10)650553 (20)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԵՐՎՈՒՄԻ ՍԵՐՎԻՍ
HEALTH AND LABOUR INSPECTION AGENCY
OF THE REPUBLIC OF ARMENIA

0047, 22, ք. Երևան, Նորք-Մարաշ, Ա. Արմենակյան 129
Հեռ. (374-10) 65-05-53 Էլ. փոստ՝ info@hlib.am
www.hlib.am
Թեժ գիծ՝ 8107